ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Նորին Սրբություն Գարեգին Ա. Կաթողիկոսը հունվարի 24-ին ավարտելով հովվապետական այցը Եգիպտոս, շնորհակալական հեռագիր հղեց Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահ Մոհամեդ Հոսնի Մուբարաքին՝ այցի ընթացքում արված ընդունելության համար: Հեռագրում մասնավորապես ասվում է:

«Ջերմությամբ ենք հիշում Ձերդ Գերազանցության հետ ունեցած զրույցը: Մեծապես գնահատում ենք այս հզոր արաբական պետության Ձեր սրտացավ և լուսավոր ղեկավարությունը, ինչպես նաև Ձեր անգնահատելի դերը ամբողջ արաբական աշխարհում:

Աղոթում ենք Ամենակարող Աստծուն, որ Ձեզ պարգևի անսահման իմաստություն և արիություն ավելի մեծ ծառայություններ մատուցելու Եգիպտոսին, Արաբական աշխարհին, Մերձավոր Արևելքին և ամբողջ աշխարհին՝ ի շահ խաղաղության, արդարության և բարգավաճման:

Վստահեցնում ենք Եգիպտոսում մեր հայ համայնքի և մեր Եկեղեցու անսատան նվիրվածությունը Ձեզ:

Թող Աստված օրհնի Ձեզ և Եգիպտոսի ողջ ժողովրդին:

Սիրով, շնորհակալությամբ և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ»